

## Հաշվետվություն 2018

Գիտահետազոտական համալիր լաբորատորիայում 20017-18 թթ. ուս տարում կատարվել են գիտահետազոտական աշխատանքներ «Ֆիզիկա», «Կենսաբանություն» մասնագիտությունների մագիստրատուրայի ուսանողների և ուսումնական գործընթացին վերաբերող աշխատանքներ՝ բակալավրի «Դեղագործական քիմիա» մասնագիտության ուսանողների մասնակցությամբ: Օգտագործվել են ֆոտոկալորիմետր, ապեկտրոֆոտոմետր, թերմոստատ, իոնների անալիզատոր:

**2017-18 թթ. ուստարվա հոկտեմբերի 5-ին** ֆիզիկայի ամբիոնի դասախոս Վ. Քոչարյանը մագիստրատուրա առաջին կուրսի ուսանողներին ծանոթացրեց **SL-150** ֆոտոսպեկտրոմետրի կառուցվածքին: Այնուհետ կատարվեց տարբեր տիպի ալիքների երկարության որոշման փորձեր նույն կուրսում:

Ֆիզիկայի ամբիոնի դասախոս Է. Ավագյանի կողմից «Ֆիզիկա» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսում փորձ դրվեց: Սկզբում ծանոթացան **ՓՄՄ-2201** ֆոտոսպեկտրոմետրի կառուցվածքի և շահագործման կանոններին, այնուհետև մինչև թեզի պաշտպանությունը կատարվեցին փորձեր, գրանցվեցին արդյունքներ:

**Նոյեմբեր** ամսին Ջ. Վարդանյանի ղեկավարությամբ «Կենսաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսում թվային ֆոտոէլեկտրական կոլորիմետրի **AE-30F –ով** փորձ դրվեց թեզի պաշտպանության համար՝ «Նյութի օպտիկական խտության որոշումը» թեմայով: Ամբողջ տարվա ընթացքում որոշվեց տարբեր նյութերի օպտիկական խտությունը, որն էլ օգտագործվեց թեզի պաշտպանության ժամանակ:

**Դեկտեմբերին** շարունակվեցին դրված փորձերը և արդյունքների գրանցումները:

**Հունվարին** ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ս. Փարսադանյանի կողմից դրվեց «Օդու սպեկտրի գրանցում» թեմայով փորձ «Ֆիզիկա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Շախկյանի հետ, որի ընթացքում գրանցված արդյունքները օգտագործվեցին մագիստրոսական թեզի պաշտպանության ժամանակ: Շարունակվեց նաև Ջ. Վարդանյանի կողմից ղեկավարվող թեզի համար արդյունքների գրանցումը:

**Փետրվարին** Ս. Փարսադանյանի ղեկավարությամբ թեզի թեմայով ստացան վանելինային յուղի և կոկոսի յուղի ինֆրակարմիր սպեկտրներ, ինչպես նաև վանիլային յուղով սուսպենզիաների պատրաստում **ՓՄՄ-2201** ֆոտոսպեկտրոմետրի միջոցով: «Ֆիզիկա» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսում Վ.Քոչարյանի ղեկավարությամբ կատարվեց փորձ «Լուծույթներում ալկալիական մետաղների կոնցենտրացիայի որոշումը» թեմայով **SL-150** ֆոտոսպեկտրոմետրի միջոցով:

**Մարտին Ս.** Փարսադանյանի ղեկավարությամբ դրվեց փորձ «Ասպիրինի սպեկտրի ստացումը ինֆրակարմիր տիրույթում» **ՓՇՄ-2201** ֆոտոսպեկտրոմետրի միջոցով: Քիմիայի ամբիոնի դասախոս Է. Խաչատրյանի կողմից դրվեց փորձ «Դեղագործական քիմիա» մասնագիտության 4-րդ կուրսում՝ Սպեկտրոֆոտոչափություն՝ «Անալզինի լուծույթի օպտիկական խտության որոշումը» թեմայով **SL-150** ֆոտոսպեկտրոմետրի միջոցով:

**Ապրիլին** շարունակվեցին Ս. Փարսադանյանի ղեկավարությամբ **ՓՇՄ-2201** ֆոտոսպեկտրոմետրի միջոցով գիտահետազոտասկան աշխատանքի կատարման համար կատարվող փորձերը:

Քիմիայի ամբիոնի դասախոս Վ. Հովսեփյանի կողմից դրվեց փորձ թերմոստատի օգնությամբ «Իբոպրոֆենի և պարացետամոլի օշարակների մանրեաբանական մաքրության որոշումը» թեմայով ավարտական աշխատանքի համար:

**Մայիսին** շարունակվեցին Զ. Վարդանյանի և Ս. Փարսադանյանի ղեկավարությամբ թեզերի պաշտպանությանը վերաբերող փորձերը և արդյունքների գրանցումը:

Քիմիայի ամբիոնի դասախոս Ռ. Դավիթավյանի ղեկավարությամբ «Դեղագործական քիմիա» մասնագիտության 4-րդ կուրսում դրվեց փորձ «Ասպիրինի սպեկտրալ անալիզ» թեմայով, օգտագործվեց **ՓՇՄ-2201** ֆոտոսպեկտրոմետրը:

Քիմիայի ամբիոնի դասախոս Ա. Ղազարյանի ղեկավարությամբ **ՓՇՄ-2201** ֆոտոսպեկտրոմետրի միջոցով դրվեց փորձ «Դեղագործական քիմիա» մասնագիտության 4-րդ կուրսում, «Պղինձ-նովոկային կոմպլեքսային միացության ուսումնասիրությունը ջրային միջավայրում» թեմայով ավարտական աշխատանքի համար:

Կենսաբանության ամբիոնի դասախոս Հ. Մխիթարյանի ղեկավարությամբ «Կենսաբանություն» մասնագիտության 2-րդ կուրսում թերմոստատի միջոցով դրվեց փորձ «Բույսերի ֆիզիոլոգիա» առարկայից «Օսլայի սինթեզը» թեմայով, որը շարունակվեց ամբողջ ամիս՝ անընդհատ արձանագրելով արդյունքները:

**Հունիսին** հեռակա ուսուցման «Կենսաբանություն» մասնագիտության 3-րդ կուրսում կենսաբանության ամբիոնի դասախոս Հ. Մխիթարյանի ղեկավարությամբ դրվեց փորձ՝ «Ազատ և կապված ջրի պարունակության որոշումը»: Արդյունքները գրանցվեցին 10 օր շարունակ:

**Հուլիսին** կենսաբանության ամբիոնի դասախոս Լ. Բայրամյանի ղեկավարությամբ ՈԻԳ-ի աշխատանքի համար դրվեց փորձ «Վանաձորի պոչամբարի և ստուգիչ կետի համեմատումը» թեմայով՝ թվային ֆոտոէլեկտրական կոլորիմետրի **AE-30F** –ի միջոցով: